

Թէ ո՛վ մամիկիս այդ բանն աւանդեց, ինձ երբեք չասաց,
 Բայց մի դէպք ուղղեց իմ թիւը կարծիքը բու՛ճնի մասին:
 Մեր հայրենի տունն շատ յայտնի տեղ էր: Մեղուսասար լեռան
 Անտառոտ լանջքին, ուր եւ բացուած էր մի ձորաքերան:
 Ամբողջ գիշերը, կարմիր տանիքի ծըխնելոյզի վեր
 Գալիս էր լալկան մի վույրոջ բու՛ճ՝ իբրեւ գութաքեր:
 Ամիսներ յետոյ, լուսնակ մի գիշեր, սաստիկ վերդովուած,
 Զէնքս առի, մըթում նըշնեցի եւ... բա՛մ, բու՛ճը ընկաւ...:

Բայց յաջորդ գիշեր մընացի ապշած, երբ նոյն տեղ թափ
 Մի այլ բու՛ճնի աւելի աղու վո՛ւյի ձայնն առի:
 Այս անգամ սա՛ էր եկած նոյն ժամին ողբալու անկուշտ՝
 Մինչեւ որ դարձեալ, մի լուսնակ գիշեր, պայթեց իմ փամփուշտ...:
 Ժամանակ յետոյ, ման գալով մարգում, ինչ տեսնեմ յանկարծ.
 – Ոտիս տակ փռուած երկու դիակներ անսէր, գիրկընդխառն:

Փարիզ

ՀԱՅԿ-ԱՐԱՄ

Թ Է Ո Դ Ի Կ

“ՍՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅԸ,”

1926

Քսան երկար և յոգնատանջ տարինեւ,
 բու գրական պսակով հրապարակ ելաւ
 Թէոդիկ, և իբրեւ յարատեւութեան չքնադ
 կոթող մը կանգնած է հայ գրականոււ
 Թեան խորտակուած դաշտին մէջ:

Մեր գրականութիւնը կացնահար ան-
 տառի մը կը նմանի, որուն սաղարթագեղ
 մայրիները իրենց կենսաբեր բուններէն
 կտրտուելով տարածուած են ցուրտ գետնի
 վրայ՝ իբրեւ բողբոջի յաւերժական կոթող-
 ներ: Այդ ոստաքանց բուններէն կը ծլին
 օրրատօրէ նոր և կարշնեղ ուժեր, դեռ մա-
 տաղ իրենց զաղափարին, քայլերուն մէջ,
 որոնք կու գան այսօր զարգացելու Թէո-
 դիկի էջերը:

Եւ ո՛վ մեզմէ այնքան փութկոտ գուր-
 գուրանքով չի հետեւիր այդ մատաղ գրիչ-
 ներուն:

Թոքիոյէն մինչև ի Քալիֆորնիա թը-
 ուած են այս տարուան տարեցոյցները և

իբրեւ ամենօրեայ գրական աղօթագիրքներ
 ամենուրեք կ'ընկերեն ընթերցատէր հայուն:
 Ճոխ է իբ պլազան պարունակութեամբ.
 ստուար՝ Թէոդիկի համբերութեան չափ,
 վայելչատես և գեղատիպ՝ իր նուրբ ճա-
 շակին համեմատ: Տասնեկինը ծաղկալից
 պարուններ անցուցինք Թէոդիկի բուրաս-
 տանին մէջ, ուր ամէն հայ տնկած էր ծա-
 դիկ մը, բոյս մը՝ որ իւր ազգակից եղ-
 բայրը զայ ու հոտոտէ. ահա քսաներորդը
 աւելի ճոխ աւելի գրաւիչ իբրեւ դալար
 դրասանգ մը անխոնջ հեղինակին: Այն
 գերազանց ճիգը, աշխատանքը որ անխոյ
 Թափեր է թէ՛ նախական և թէ՛ բարոյա-
 կան կերպով ի. թիւը հրատարակելու՝ զիս
 հիացմունքով կը զոդացնէ: Տարեցոյցը գե-
 ղեցիկ ոճով դասաւորուած է ինն մասերու
 մէջ. նախ տօնացոյց մը, ապա կենցաղա-
 գիտական համառօտ և գործնական էջեր:
 Երկրորդ մասը երկարատանջ և ման-
 ռազմինի ուսումնասիրութիւն մը, «ՈՐԹԻ-
 ՈՒ ԻՐ ԲԵՐՔԸ, այցեքրանական և մատենա-
 գրական ուսումնասիրութիւն Թէոդիկի», հն-
 տաքրքրական և թանկագին աշխատութիւն
 մը, ուր երբեք չափազանցեալ իսկ ման-
 րամասնութեամբ կը խօսի որթատունկին

ամէն մասերուն վրայ, լի գինեմոլներու և գինատեացներու երգերով. նման է բառ-գրքի մը, ուր ամէն ցանկացածը կը գտնենաւ, մանաւանդ խաղողի գաւառական կուլուինները:

Սակայն եթէ Պ. Թէոդիկ կանխաւ ըսած չըլլար՝ թէ այդ «Երկամայ 144 էջ»-նոց ըրանաբեր աշխատանքս Տարեցոյցներուն իբրեւ պսակ մը կը զետեղեմ ի թուոյն ճակատը»՝ պիտի ըսէի թէ շատ ծանրը և անյարմար էր Տարեցոյցի մը համար, որ շարժանկարի պէս յարափոփոխ տեսարաններով եկած է գմեղ տարի մը զբօսցնելու:

Չուարճական մասը լաւ գրուած է այդ երկար ուսումնասիրութենէն վերջ, վառվռուն և սրամիտ պատկերներով, գիտաւոր բացատրութիւններ աշխարհքիս ամէն կողմէն հաւաքուած՝ կրնան տարի մ'ամբողջ բաւել հայութիւնը զուարթ բռնելու համար:

Եւ ահա 196 էջով կը մտնենք զրական բաժնին մէջ, որ զոչոք գեղարուեստական և հայկական մասերովն՝ կը կազմէ այս տարուան տարեցոյցին ողնաշարը և գրաւիչ բաժինը, լի արժեքաւոր յօդուածներով: Հիշել է ըսել որ մեր լաւագոյն հեղինակներէն՝ ողջ թէ մեռած՝ գրեթէ ամէնքն ալ սիրով աշխատակցեցին են տարեցոյցիս գեղազարդման:

Գրական բաժինը կը բացուի վարդապետական գրութեամբ մը. Սահակ Բ. Կաթողիկոսը սրտատուէ յորդորական մը կ'ուղղէր ի վայրավատեալ զաւազոյններուն: Կը հետեւի Խորիման Հայրիկի մի անտիպ նամակը, ճշմարիտ պատկեր իր վեհ և օծում նախից սրտին, մինչ Ղ. Եպ. Դուրեանի «Ճշմարտութիւնը» կուռ և կրակոտ նկարագրով քարոզ մը՝ որ գմեղ վառ երեսակայութեամբ կը թևաւորէ:

Դաստիարակական և բարոյական կտորներն ալ պակաս չեն, մանաւանդ գեղեցիկ մտածութեամբ Թէոդիկ գրեթէ ամէն էջի ստորոտը զետեղած է մէկ մէկ ասացուած հին և նոր նշանաւոր հեղինակներէ, որոնք կարող են երբեմն ակնարկով մ'ալ գմեղ

խոր մտածութիւններու ասնիլ: Բանաստեղծական էջերը շատ մեծ արժեք չեն ներկայացներ, բացի մի՛ ճանի հատէ՝ որ կարելի է կարդալ և զմայլել: Ահարոնի կանթեթը՝ էջ 219՝ խորհրդաւոր մութ ու լոյս մ'է հոգեկան ասկայծուռներու եկեղեցւոյ կամարներու տակ, բորբոքուած անծանօթ շնչով մը:

Պուլկար բանաստեղծ Եւփորոֆի «Հայեր»-ը՝ նահատակ ցեղին ներքոյնան մ'է, ոտանաւոր գրուած, սակայն կորովի և խիզախ ջունչը՝ ընթերցողը գերազանցօրէն կ'ուգնորէ:

Վահան Թէքէեանի «Եկեղեցին Հայկական» կոճի ունի խորհրդապաշտ գողտրիկ ներբերաններ, և գրեթէ մանկական պարզութիւն մը զգացման՝ դէպ ի հայրենի Եկեղեցին: Դեռ կան բաւականաչափ բանաստեղծութիւններ, որոնք այնքան արժէք չունին իբր ինքնագիր երկեր, բացառութիւնները յարգելով: Ստեփան Եսեկեան է որ ցորենին հետ յարդն ալ կայ Տարեցոյցին մէջ, մասնաւորապէս ոտանաւոր և արձակ վէպերու և բանաստեղծութեանց մէջ: Այս գրական անյաջողութիւններուն ալ կարելի է հաշտ աչքով նայիլ երբ նկատուի նախ՝ զորքին նպատակը՝ որ կ'ուզէ քաջալերական զարկ մը և ասպարէզ մը տալ մեր երկրորդակարգ գործներուն, երկրորդ՝ նայելով նաև Տարեցոյցին նիւթական յօրինման պարագաներուն:

Վիպական գրութիւններուն մէջ իբրեւ լուսաւոր աստղ մը կը փայլի Պ. Համաստեղի «Սիմֆոնի»-ն, ուր գեղջկական բարքերու միամիտ պարզութիւնը, անձերու նկարագրի իսկատիպ ընտրութիւնը, դիտող և ճարտար հեղինակի մը վիպական ամէն ձիրք կը ցուցնեն. կարապետը այն տըռ պաւորութիւնը կը զգայ՝ թէ այս վէպիկը չափազանց գեղջկական է. և ճիշտ հող է ճարտարութիւնը և հաճելին, իրականը իսրականէն աւելի լաւ ներկայացնել:

Միակ թերին այն է որ կարծես ոտանաւոր է քան թէ արձակ, ինչ որ տղայուսթիւն է գրականութեան մէջ:

Տիկին Չապել ունի «Յակոբ Մօրեղիսյան»

գողտրիկ վերլիշուժները, Պ. Խահակեան՝ հանելի հեքեաթ մը իր անցեալէն, Պ. Մա-
ժակցին «Մամիկոն», սիրելի էջ մը ամենուս
սիրած օրերէն հրաշալի կերպով զուգա-
ւորուած Պ. Ա. Մուրատեանի «Ալիկեյի
հայ մամիկոն» քասորով:

Գրական բաժնին մէջ իբրեւ բանասի-
րական յօդուած կը գտնենք Պ. Գ. Ֆրն-
տըզեանին «Հայ իշխանաւորք ի Ռուսիենա
և Բիզանդական Կայսրութեան մէջ»: Ան-
շուշտ մեծ հետաքրքրութեամբ կը կար-
դացուի Տարեցոյցիս ընթերցողներէն, նիւ-
թին զբախէջ էութեան համար: Թարգ. յօդ-
ուածագիրը քանի մը էջերու մէջ լաւ ամ-
փոփած է ծայրածաւալ պատմութիւնը, որ
հետեւողներու կարօտ է: Պ. Ֆրտզեան
անշուշտ չ'անգիտանար որ այս նիւթիս
վրայ թէ՛ ատանձին հատորով՝ և թէ Բագ-
մալիկի մէջ ստէպ երեցած են վաւերական
յօդուածներ, մանրամասն և բազմակող-
մանի, և պիտի գտնէր իտալիոյ մէջ դեռ
Մլեհ Արծրունի մ'ալ Սահակի (հաւան-
օրէն Արծրունի, կ'ըսէ հեղինակը էջ. 357)
ըով՝ ազգակից և ցեղակից, որ խաւական
ազգային միացման առաջին հիմը ձգած
է, այսպէս հանդիսանալով զազափարի
հերոս մը:

Մտնելով Գեղարուեստական մասը՝ որ
Զ.՝ է՝ հոն ոչ այնքան արուեստը ինք-
նին կը գտնենք, այլ զայն մշակողները:
Այս բաժնի ոգին է ներկայացնել հանրու-
թեան, տարուան մը մէջ ըրած մեր գեղ-
արուեստական առաքելութիւնը, ըլլայ
թատրոնով, ըլլայ երաժշտութեամբ, ըլ-
լայ նկարչութեամբ ողջ աշխարհի մէջ:
«Աժու փոքր եմ, բայց և ի մերում
աշխարհի գտանին ոչ սակաւ գործը ա-
րութեան» հարկ է խոստովանիլ Մ. Խո-
րենացոյն հետ, ըլլայ Ամերիկայ ըլլայ
այլուր, մենք ստէպ կը լսենք հայ գեղ-
արուեստասէրներու յաղթանակներ, Մա-
խոխեանի, Շահինի, Խաչատուրեանի, Ա-
ղամեանի, Շապանեանի, Ֆէթիհեանի,

Թէրլէմէզեանի, Մուրատեանի, և այլն:
Կը լսենք հայ երգի կատարած խոր և
սթափիչ ազդեցութիւնը, միացած պարե-
րու ճկուն և շնորհալի թափչներուն, մա-
նաւանդ Կոմիտաս վ. հանդիսական և հան-
գուցիչ հովուներգութիւնները, որքան հիաց-
ման ծափեր խլած են: Դերասաններ կը
տեսնենք՝ որոնք չափած են մեծ յաջո-
ղութեամբ արեւելքի և արեւմուտքի բար-
ձրագոյն բեմերը՝ Աթէնան, Փափագեան,
Էլիզ Գովան և այլն:

Հայ Գրականութիւնն ալ օտար հորի-
զոններու տակ, զոհացուցիչ էջեր բացած
է. Օր. Զապէլ Պոյանեան Նկարիչ-Գրագէտ՝
հերոս հրատարակած իր կիկլամէդով մեծ
հրճուանք պատճառեց հանրութեան, փա-
ռապանծ յիշատակ մը թողլով հայու բար-
ձր ձիրքերուն: Մայրը Արլըն Թէպէտ
հեռացած հայու քաղցրարարբառ լեզուէն,
սակայն իր մտքի յղացումները ծնունդ են
հայ հոգւոյն և չենք կրնար զինքն օտար
համարել Նոյն իսկ եթէ ինքզինք ալ օտար
զգայ:

Պ. Թէրզիկի Գեղարուեստական այս մա-
սին մէջ դեռ շատ ու շատ մանրամաս-
նութիւններ ունի, Արձանագործութեան,
Ճարտարապետութեան, Գիտական հնու-
թիւններու, Օտարազգի հայագէտներու
վրայ, որոնք որքան հետաքրքրական և
հանելի են, ընթերցողները միայն կրնան
զգայ:

Գեղարուեստական Զ. մասով ալ դեռ
չի լինար Թէրզիկի լայնածաւալ աշխա-
տանքը: Է. մասը գրեթէ ամբողջովին նը-
ւերուած է Անկախ Հայաստանի «Հայ-
կական» յորըըշմամբ, ուր տնտեսական,
նիւթական, զինուորական և կրթական
լայն ծանօթութիւններ կը սրուին Հայաս-
տանի, Ամերիկայի գաղութին և Պարս-
կաստանի հայութեան վրայ: Մարդա-
համարներ հայութեան՝ բոլոր աշխարհիս
մէջ. հինէն ու նորէն հասարակական գոր-
ծիչներու և մեծ անձնաւորութիւններու
համառօտ կենսագրականներ, դափնէպը-
սակներ լուսաւոր զմեքերու, վարժարան-
ներու պատկերներ և թուարկումներ:

1. Հ. Կարապետ Տէր Սահակեան Հայ Կայսեր
Բիզանդիոնի, 2 հատոր, Վենետիկ, 1907.

Հայկական բաժնին մէջ լուրջ և կարևոր տեղ կը բռնէ Հ. Վ. Հացունին՝ «Հաւատարմութիւնը Հայոց մէջ» յօդուածը, ուր պատմականօրէն կը ցուցադրուի մեր հին հայրերու և իշխաններու գործադրած խոշտանգանքները, հաւատքի դէմ անաստող մոլորեալներու, այնքան խստութիւն՝ որ մինչև իսկ անոնց ճակատը կը խարէին ժողովուրդը զգուշացնելու համար.

Ութերորդ բաժինը կը բուրէ գիտական ծանօթութիւններ, աշխարհագրական, պատմական, առողջապահական, ընտանեկան և այլ անթիւ ականներ, որ անգլիտաց անպէտ չեն:

Իններորդ և վերջին մասը նուիրուած է «Մենէ անդարձ մենկողներու» հայաստեղ տխրութեան քողով պատած էջեր, որ հառաչի և ճնշաց բարով չի ալրող արցունքը միայն մեզ կը թողուն: Այս համառօտ հաճոյալի պտոյտը կատարելէն առաջ թէոզիկի անծայր Տարեցոյցին մէջ, չեմ ուզեր լուռ անցնիլ զայն պննազարդող (197) նկարներու վրայէն: Մասնաւորապէս Պ. Ա. Մուրատեան իւր Դիւրիք ցեղային դիմանկարներով շատ մեծ ծառայութիւն մատուցած է թէ՛ Տարեցոյցին և թէ՛ հանրութեան, հրճուանք պատճառելով մեզ իւր հանճարեղ յղացումներով: Այլապէս անհարաններ, հեղինակներու դիմանկարներ, լուսանկարներ, որոնք շարժանկարի քաղցր տպաւորութիւնը կը թողուն Տարեցոյցը թղթատողին:

Մէկ բան որ այնքան հաճոյ չէ՝ հանճարներու լուսանկարներու տակ գրուած է իւր փառքի օրերուն՝ բացատրութիւնը, որովհետև հանճարները միշտ փառքի մէջ են:

Կարել չէ թողուլ Տարեցոյցը առանց հիացմունքի, առանց հրճուանք մը զգալու այսքան քրտնաբեր և հսկայ աշխատանք մը տեսնելով:

Պ. Թէոզիկ լիապէս պսակած է իւր քսանամեայ հրապարակային հարուստ գործունէութիւնը. վստահ ենք որ ոչ թէ լոկ հայութեան այլ և օտար ազգերու մէջ պիտի չգտնուի մէկը՝ որ համբերութեամբ,

սոսկանութեամբ և հմտութեամբ իրեն հաւասարի Տարեցոյց հանելը թէոզիկի յատուկ մասնաճիւղը դարձած է. ուրիշներու կատարածը նմանութիւն է և առայժմ անհաւասարելի մրցանք: Գրական լայն բաց մ'է որ քսան տարի է թէոզիկ փառքով կը գոցէ: Եթէ հայ մը չունենայ սոյն հատրէն իւր սեղանին վրայ՝ պիտի ըսենք թէ չի գիտեր յարգել ոսկին, և կամ գրական աշխարհէ լուր չունի:

Պ. Թէոզիկ, յարատեւութիւն և արիւնութիւն. դեռ շատ առաքելութիւններ ունիս կատարելիք:

Հ. Վ. ՅՈՎԱՆՆԻՍՅԱՆ

ԱՅԼԵԻԱՅԻՔ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԷՏ ՍԸ

ՕՏԱՐ ԵՐԿՆՔԻ ՑԱԿ



Տարեցուցադիր Թէոզիկ այս տարի իր ծանօթ երկասիրութիւնը Հանրութեան ներկայացնելով՝ լաւագոյն կադանդէնքն ըրաւ՝ գործոյն ՉՕամեակին վայել փայլովը: Անոր մասին սկսան արդէն լսուիլ թերթերու և լրագրիւններու սիւնակներէն գնահատական տողեր, որոնց յիշաւի արժանի է բազմաբախտ Հեղինակը:

«ԲԱԶՄԱՎԷՊ»-ի ներկայ թիւն ալ՝ վերջ գրախօսական մ'ունի այս պատուարքը աշխատութեան մասին: Բայց մենք հոս ուշադրութեան առարկայ կ'ուզենք ընել մեզի լոկ մէկ կէտը:

«Ամենուն Տարեցոյցը» դեռ չբացած՝ նախ պիտի հետաքրքրէ զմեզ անոր մուտքը: Ելլադայէ հիւրընկալուող Հայ Արուեստագէտի մը՝ Պ. Աւետիս Մուրատեանի պատրաստած կողքն է. իսկապէս արժանաւոր դրամանոց մը ազգային գրականութեան մէջ ՉՕամեակ մը բոլորող յայտնի տարեցոյցին: Այդ պատկերը կը ցուցադրէ